ՆՈՐ-ԴԱՐ

№ 129. ՈՒՐԱՀԻՆ ՏԱՐԻ Հինգշաբթի 9 Օգոստոսի

1884

Հինգշաբթի 9 Օգոստոսի ՈՒՐԱՀԻՆ ՏԱՐԻ № 129

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Հասում՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրությունն հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Titlis, Rédaction „Nor-Dar“.

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի ամն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարության վճարը բաւական 2 կ. բեկլամներից համար՝ կրկնապատիկ.

«Նոր-Դար»-ի բաժանորդագրությունը շարունակվում է։

Կարելի է կէս տարով բաժանորդ գրուել յուլիսի 1-ից մինչև յունվարի 1-ը 1885 թ. ամեն տեղի համար գինն է — 6 րուբլի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Մեր դրութիւնը։
Քրոնիկոն. Լուրեր, — Նամակ խմբագրին։—
Թղթակցութիւններ.— Երևանից և Շուշուց։
Փաղաքական.—Լուրեր։
Հեռագիրներ, Յայտարարութիւններ։
Բանասիրական. — Սատանան, կախարդութիւնը, լինկվիսցիան և վհուկների այրումը Գերմանիայում։

Թիֆլիս, 8 Օգոստոսի 1884

ՄԵՐ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ով որ հետևում է «Նոր-Դար»-ի մէջ հրատարակուած գաւառական թղթակցութիւններին, նա անշուշտ նկատած կը լինի, որ ամեն տեղից էլ միևնոյն գանգատները, ամեն տեղից էլ միևնոյն տրտունջներն են լսվում, և այս վերջին ժամանակներս գնալով դրանք աւելի ոստկանում են։

Փարոցներն լաւ վիճակի մէջ չեն, յետագիմում են, փող չը կայ, ուսուցիչներն ռոճիկներն չեն ըստանում. բողոքները հոգաբարձութիւնների դէմ, թեմական տեսուչների դէմ, երէցփոխաններն եկեղեցական գումարներն վատնում են, հաշիւ, համարատուութիւն, համարառութիւն չը կայ. քահանան գանգատվում է իւր ծուխից, ծուխը՝ իւր քահանայից, տրտունջ հոգեւոր իշխանութեան դէմ, բողոք նոր և անարժան մարդիկները քահանաները ձեռնադրելու դէմ. այստեղ քահանաների շատութիւնից քահանաները իրենց օրն են անիծում, այնտեղ մեռնում են մարդիկ և թաղվում առանց քահանայի—քահանայ չը կայ։ Եկեղեցական կալուածները կորչում են, տէր չունին, կամ դրանց արդիւնքներն վայելում են մասնաւոր մարդիկ, ընդհանուր անտարբերութիւն դէպի եկեղեցին, դէպի հատարակաց գործերը.... աւելացնենք այդ ամենի վերայ ընտանեկան կռիւների և լաւ բարքի ու վարքի թուլանալը, ապօրինի կնոպահութեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՏԱՆԱՆ, ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆԸ, ԻՆԿՎԻԶԻՑԻԱՆ և ՎՀՈՒԿՆԵՐԻ ԱՅՐՈՒՄԸ ԴԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ.

(Շարունակութիւն)

Հին ժամանակները շատ հիգն էին Ծախում գանելու փիլտրա ասուած սիրոյ ըմպելին, որը պատրաստութեան համար բնական գրգռիչների հետ միասին գործ էին դնում և շատ անճոռնի ու զազրալի իրեր։ Դեռ 1726 Ց. Կրէյտերման ասում է իւր „Նորանման և հրաշագործ բժիշկ“ անունով գրքի մէջ, թէ „Դիւթական և գիւտական սիրոյ օղարակները պատրաստելու համար կախարդները ու վհուկները գործ են գրնում մասամբ բառեր, նշանները, ազօթումները, մոմի պատկերները,—մասամբ էլ մարդկային եղունգի կամ հագուստի կտորները, որ և Ծաղում են գրան չէմի տակ։ Անառակ կանայք և գրանց նման էակները բանեցնում են ամօսական հեղուկ, այր մարդու սերմ, նորածին մանկան ազա, կաթն, գրանիք, մեղ, Ծուխ, մազեր, գորտի կաշ, օձաձկի կամ գորտի ուղեղ և ուրիշ սրանց նման բաներ“։ Այս տեսակ նկարների մի կառնուրդ կամ մարդու արիւնից, նապաստակի երկուորիքից և ագաւնու լեարդից պատրաստուած մի Ծան լամել տալով ցանկալի անձին, կարելի էր իրը Ծէ վհուկադարձ սէր յարուցանել նրա մէջ։ Այս և ուրիշ սիրոյ բժժանքների դէմ, որոնք են, օրինակի համար, սիրոյ խնձորը, սիրոյ մատանին, Ատղնկի Ծալիսմանը,—կային և հակադեպիր, „Առաձնի բժշկութիւն“ վերնագրով մի գիրք 1532 Ծուականից լոտարածուիլը գիւղերում և այս ու այն քահանայի տուած գալմակղեցուցիչ օրինակները և չը հաս սլըսակների գլուխ գալը—և ահա մենք գիտենք ամեն տեղից լսած գանգատների և տրտունջների պատճառներն։

Եթէ միայն գանգատուելով, տըրտընջալով, բողոքելով, մամուլի մէջ այդ ամենը հրապարակ հանելով, դեր և դէմ գրելով կարելի լինէր վերջ տալ այս գանգատներին և գարման անել այդ ցաւերին, մինչև օրս արդէն այդ կատարուած պէտք է լինէր, և մենք ստիպուած չէինք լինիլ նման բովանդակութեամբ թղթակցութիւններ հրատարակելու։

Այսօր մենք տեսնում ենք, որ մեր բոլոր գործերը անհաստատ, շատ բանում աննախանձելի և շատ բանում էլ յուսահատ վիճակի մէջն են։

Այս ինչ հոգաբարձուն ինտրիգանտ, անխիղճ է, այն ինչ քահանան տգէտ, պարտազանց է, այս եկեղեցու երէցփոխանը հաշիւ չէ տալիս և եկեղեցապատկան գումարներն իւրացրել է, այն դպրոցի տեսուչը գեռ մի արդիւնք չը ցոյց տուած, մի բան չարած՝ մի

Ռէֆօրմարցեալն ժամանակ, և յատկապէս երեսնամեայ պատերազմի միջոցին, գլխաւորներն առ հասարակ վարակուած էին կախարդական վերա չալելիների և սուտերների, գլխատպետների և ամրացման հաւատով։ Անթիւ դէպքեր են յիշվում այնպիսի զօրականների մասին, որոնց ստիպուած են եղել բերերով սպանել, պատճառ որ նրանց մարմինը իրը Թէ ամրացած էր եղել սուսերի, տեգի և գնդակի հարուածներից դէմ։ Նաև անուանի զօրավարներից ոմանք համբաւուած էին իրրև անվիրաւորելիք, օրինակ — Վալլէնշտէյնը, մինչև որ գրա սպանիչները հակառակը չ'ապացուցին։ Գողերն և աւազակները ստէպ գործ էին ածում գ ո ղ թ ա թ ասուած բանը, որ պատրաստվում էր կախուած մարդու ձեռքից և անկվում էր նրա Ճարպից, մեղրամոմից և վուշից գնուած Ճրագուի մէջ։ Դրա լոյսն, ասում են, յատկութիւն ունէր մի անգամայն ղացնելու և ընդարմացնելու այն մարդկիներին, որոնց տան մէջ մտնում էին գողերը։ Մի քանի գաւառներում գողն Թաղի պատրաստելու համար գործ են ածում երեք տեսակ բոյսեր, Հատա և գրան հակառակ՝ սիրոյ վայելքը խափանելու միջոցներ էլ ունէր միջնադարեան կախարդութիւնը։ Դրանք էին լոնջան կապելն կամ կըզպանք փակելը, որ այսպէս էր լինում. մի նենգամիտ մարդ կամ կին, որ կամենում էր խանգարել սիրակցող ամոլների երջանկութիւնը, օրշեալ խոսքեր ասելով նրանց պահի ժամանակ՝ կապ էր կապում լոնջանի վերայ կամ Թէ գոցում էր կղպանքը։ Այդով մարդը կամ կինն արգելվում էր ամուսնական պարտաւորութիւն կատարելուց, մինչև որ կախարդանքը չը լուծուէր մի ներհակ Թովչութեամբ։ Կախարդներին դատող ատեանները աբձանագրութեանց մէջ ամենից շատ յիշատակութիւն է լինում հէնց այդ տեսակ չարանենգ կախարդանքների մասին։ Պատահել է, օրինակի համար, որ մի վհուկ, իւր բըժդանքի դիւթական զօրութեամբ, ակընյատնի կերպով Ծառի վերայ է կախել մի մարդու արական օյժը... „1550 Թ., պատմում է Դաստիուս իւր Sermones convivales“ լատիներէն գրքի մէջ. Բազէլ քաղաքի վիճակաւոր արքեպիսկոպոսի գիւղում Հրոյ մատնուեցաւ մի դեռահաս կին։ Այդ կինը պիղծ կապ էր ունեցել սատանայի հետ. յաճախ վնաս էր հասցնում կովերին, խախտում էր պատանիների օսկորները կամ Թէ կուրացնում էր նրանց և կամ վերջապէս Ծառի վերայ էր կախ տալիս տղամարդկիների արականքը, որպէս զի նրանք անպէտք լինեն ամուսնական գործի համար — viris mentulam ad nucis arborem suspenderat quod essent ad coitum inhabiles։ Եւ Հնչ գարշելի էակներ են այդ կանայքը, որ կուրըզկուրայն անձնատուր են լինում սատանայիներ, բացականչում է միևնոյն հեղինակը։

քանի ամսից ամբողջ տարուայ մի քանի հազար րուբլի ռոճիկը գանձելով՝ Ձգում գնում է, իսկ խեղճ ուսուցիչը տարին տասներկու ամիս Ծանր և խղճի մտօք աշխատութիւնից յետոյ, այս կամ այն հոգաբարձուի դուռն ընկած Ոի զուր է ճգնում իւր քրտինքով վաստակած մի կոպէկը ստանալու... մենք կարող էինք շարունակել։

Այդ ամենը մասնաւոր երևոյթներ չեն, ընդհանրացած ցաւ է։ Այդտեղ մեղաւոր չէ այս կամ այն մարդը, այդտեղ մեղաւորը — սիստէման է։

Քահանայ ձեռնադրելու համար գործ դրած և ընդունած միջոցները, մեր եկեղեցիները, դպրոցները կառավարելու, դրանց եկամուտները ապահովելու եղանակները, հոգաբարձութիւն ասած բանը և ուրիշ շատ կարգեր և կանոնաւորուած անկարգութիւնները, ինչպէս որ մինչև այժմս կան և գործ են դնվում, դրանք հնացած և անժամանակակից են, դրանք ծառայում են միայն գործի խանգարմանը։

Այդ ամենի մէջ կատարեալ վերանորոգութիւն է հարկաւոր նոր և ժամանակակից սիստէմայով։

Գործերը միմեանց հետ կապող և ամեն ճիւղը իւր կանոնաւոր ընթացքի մէջ գնող ընդհանուր միտք է հարկաւոր, և դրանց կենդանութիւն, կեանք տուող ոյժ, հոգի է հարկաւոր։

Այսօր մեր երկու յայտնի հոգեւոր դպրանոցները՝ Ծեմարանը և Ներսիսեան դպրանոցը միևնոյն ցաւովն են վարակուած, երկուսն էլ գեռ տեսուչ չունին։

Բայց ով պէտք է այդ ամեն գանգատներին վերջ տայ, ով պէտք է մեր գործերը կարգի բերէ, նոր հոգի, նոր սիստէմ մտցնէ նրանց մէջ։ Այդ ամենը գիտեն.—ամենայն հայոց կաթողիկոսը։

Եկեղեցին, նրա սպասաւորները, վանքերը, եկեղեցական և վանքական եկամուտներն և կալուածները, հոգևոր և Ծխական դպրոցներն... անմիջապէս կախուած են կաթողիկոսից, նրա տնօրէնութիւնից։

Երկրորդի, երրորդի Ձեռքին, կամքին, գիտութեան Թողած գործերը աւելի տխուր և անել վիճակի մէջ պէտք է ընկնեն։

Մեզ հարկաւոր էր մի խոհեմ, գիտուն, խելօք, ժամանակի պահանջները Հասկացող, մեր երկիրը

կան հաղորդակցութիւն ունենալ Աստուծոյ հետ, որ ամեն հրաշքների աղբիւրն է, այնպէս էլ ապօրինները, այսինքն կախարդներն ու ջատուկները վոյԼ էին տանում միանալու սատանայի հետ, գրան համաբելով ամենայն Թովչութիւնների տէր և վարպետ։ Ահա այստեղից է սկիզբն առնում խաւարի իշխանի հետ դաշնակցութիւն կապելու գաղափարը։ Այդ դաշնակցութեան վերայ հիմնուած մոգութիւնն էր, որ կոչվում էր „սև մոգութիւն“, մինչդեռ աստուածային զօրութիւնից յառաջ եկող հրաշագործութիւնը կոչվում էր սպիտակ մոգութիւն։ „Սև մոգութիւն“ խօսքը ծագում է յունաց նեկրոմանթիա (մեռելահարցութիւն) բառի աղաւաղեալ նեգրոմանցիա ձևից, որի մէջ կարծում էին գտնել niger (սև.) ածականը. Միջնադարեան աւանդութեան նայելով, սև մոգութեան նախկին հեղինակ համարվում է Առաքելոց գործի Ը. գլխում յիշուած Սիմոն մոգը, և ինչպէս որ դա յաղԹվում է սպիտակ մոգութեան հիմուտ Պետրոս Առաքեալից, այդպէս էլ տեսնում ենք, որ ամբողջ միջին դարերի ընթացքում սև մոգերը պատրաստում են սպիտակներից։ Օրինակ կարող է համարուել Հէլիոդորոս կախարդը, որին որ պատում է Լէօն եպիսկոպոսը, և ասլա Կլիգսոր մոգը, որ խայտառակվում է բարեպաշտ Վօլֆրամ Ֆօն Էշէնբախից։ Պատմութիւնը ցոյց է տալիս, որ միջին դարերում, ինչպէս և այժմեան անկիրթ ազգերի մէջ, սովորականից վեր գիտութիւն ունեցող և մանաւանդ բնագիտութեան հմուտ մարդիկ անչուշտ կախարդ են Թուել ժողովրդին։ Եւ կախարդ էին հռչակուած, օրինակ, Սիլբեստրոս Բ. պապը, Միքայէլ Սկոտացին, Ալբերտ

և մարդիկը ճանաչող, եկեղեցուն հաւատարիմ, մեր գոլորոցական ուրեմն և մեր ժողովրդի լուսաւորութեան գործին քաջ հմուտ կաթոլիկոս, որ անկեղծ է, անշահասէր է և սպատրաստ իւր գլուխը ու սիրտը դնելու իւր հօտի, ժողովրդի բարօրութեան համար:

Ո՞րտեղ է այդ կաթողիկոսը. բանասում ենք նրան՝ և նա չը կայ....

Ո՛ւմն ենք պարտական, որ այսօր մենք այս ողորմելի դրութեան մէջն ենք: Ի հարկէ մեզ, դարձեալ մեզ և մեր խելքին:

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

Աղէկն քանի մի օր է, որ Թիֆլիսում և նրա շրջակայքում խիստ և չարունակ անձրևներ է գալիս, այդ պատճառով ջերմաչափը բաւականին սաստ ստորնանի է իջել և եղանակը աւելի քան զով է:

—

Օգոստոսի 6-ին, մօտ կէսօրին խիստ անձրևի ժամանակ՝ կայծակը խփեց Վանքի Մայր եկեղեցու մօտ Մարկոսեանի տան կտրին: Չը նայելով հեղեղի պէս անձրևին՝ խալոյն կատուրը կրակ բռնկաւ և հազիւ թէ հրշեմաչէնների խումբը կարողացաւ հրդեհի առաջն առնել: Որովհետև այդ տան բնակիչներն ամարանոցումն են և տանը ոչ ոք չը կար, ուստի մարզու կեանք չէ վտանգուած:

—

Վերջ,,Դերօբրա'' Թերթի աստէհամբ՝ Թիֆլիսի երիտասարդութեան մէջ կազմուել է վաչ պատմական-հնախօսական մի ընկերութիւն, որի նախագահը արդէն պատրաստուած է և չուտով կը ներկայացուի Հասատատութեան:

—

„Бак. Изв." Թերթի աստէհամբ՝ Պետերբուրգից ստացուել է Բագուում սլ. Դեսպատ-Զինովիչից հետևեալ տեղեկութիւնները. Պետական կօմիսիայում վրճռուել են. 1) բացատել Բաքուումում Պօրտա-Ֆրանկոյի շրջանի ընդարձակումը. 2) Մոյ տալ անմաքս վերադարձնել Ռուսիա կէրօսինի համար վատէ և ժէստից անօթները. 3) Նաւթից պատրաստած լուղի տեղափոխման համար նշանական տարիքը ցածրացնել Բագուից մինչև Բաքում պուդից և վերստից մինչև $^1/_{35}$ կոպ. և 4) վերցնել հանքային լուղով լցուած մի տակառի տեղափոխման համար ամբողջ տարածութեան վերայ 50 կոպ.:

—

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ.—Վերջապէս կայացաւ այստեղ հայ հասարակութեանը զբաղող ընդհանուր ժողովը: Հաւաքուած էին 93 մարդ, իսկ ներկայ էին 30 հոգի: Կարդացուեցաւ ուսումնարանների հաշիւը և յետոյ առաջարկուեցաւ առաջիկայ գլոբացական շրջանի համար հրաւիրել նոր վարժուհի օրիորդ Աբամեանի տեղը, որին հոգաբարձութիւնը արձակում էր: Ժողովը հոգաբարձուներին այդ վճռին հակառակ լինելով՝ բացարութիւն պահանջեց: Հոգաբարձութիւնը ոչինչ պատճառ չունենալով՝ յայտնից, որ օր. Աբամեանը մինչև այժմը սատյած ռոճիկով չէ բաւականանում, այլ աւելի է պահանջում: Ժողովին արդէն յայտնի էր, որ օրիորդը աւելի ռոճիկ չէ պահանջում և որովհետև նա իրրև բարեխիղճ և լաւ վարժուհի հանուչուած է, ժողովը խնդրեց, որ օրիորդին աշխատանն պահել և առաջիկայ տարուայ համար: Այդ դէպքում չ'եկաւ հոգաբարձութեան և հոգաբարձուներն սկսեցին հրաժարուել իրենց պաշտօնից: Նոր հոգաբարձուները ընտրուեցան: Պ. Կիրակոսեանը ընտրուած կը ներկայացուի Հասատատութեան:

—

Վ. ԱՐԾԱՒԱՆ. Ընդհանուր ժողովը կայացաւ Ս. Աստուածածնայ եկեղեցում: Ներկայ էին 30 հոգի: Ընտրուեցան հոգաբարձուներ՝ Ս. Ալամդարեան, Ս. Ալամդարեան, Ս. Ալամդարեան, Ս. Ալամդարեան և Ս. Ալամդարեան: Ժողովը որոշեց հոգաբարձուներին հրաւիրել Ս. Ալամդարեանին:

—

ՎԱՆԱՅ ԱՂԱՒԱՆԴ. Ընդհանուր ժողովը կայացաւ Ս. Աստուածածնայ եկեղեցում: Ներկայ էին 30 հոգի: Ընտրուեցան հոգաբարձուներ՝ Ս. Ալամդարեան, Ս. Ալամդարեան, Ս. Ալամդարեան, Ս. Ալամդարեան և Ս. Ալամդարեան: Ժողովը որոշեց հոգաբարձուներին հրաւիրել Ս. Ալամդարեանին:

—

ՎԱՆԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉ

Ամենայն ոք գիտէ, որ Վիեննայի Ազգային գրադարանը ունի մեծ թուով հայերէն ձեռագրեր, որոնց մէջ կան նաեւ շատ հին եւ արժէքաւոր մագաղաթեայ ձեռագրեր։ Ասոնց ցանկը կազմած է Վիեննայի Մխիթարեան միաբան Ղեւոնդ Ալիշանը, որ ցանկին մէջ նշանակած է նաեւ ամէն մէկ ձեռագրի ծագման տեղն ու ժամանակը։ Ցանկին մէջ կան նաեւ ձեռագրներ, որոնք ունին նկարներ, ինչպէս նաեւ ձեռագրներ, որոնք ունին գրչագիր նամակներ։ Ասոնց մէջ կան

պատմեցին Պ. երէցփոխը երբ բարկութենից սէմսիմում է, իւր ատամը մատներում է և սեանելով գալիքը, շուտով քաղաքիս յայտնի անձնիքներից երկուսին միջնորդ է ուղարկում սրբազանի մօտ գործը խաղաղութեամբ վերջացնելու նպատակով. սրբազանը սեանելով նր քահանան եկեղեցում անպատուած, խոստացաւ խաղաղութիւն 1000 ռուբլի ուսումնարանին տուգանք վճարելու պայմանով. այդ երկու անձինքը համաձայնում են, որ աշխատեն այդ բանի համար համոզել երէցփոխին, որ 1000 ռուբլի տայ ուսումնարանին, ասլա թէ ոչ հետևանքը վատ կը լինի. Նա մերժում է 1000 ր. տալ ուսումնարանին. Անցնում է տասը օր. տասը անձինք գալիս են լինէ մօտ և խնդրում են հաշտութիւն. ես այդ տասը անձանց ուղարկում եմ սրբազանի մօտ, ասելով՝ „թէ երանութիւնքը սրբազանին է, ինչպէս կը կամենայ, այնպէս էլ Աղող լինի“. Դրանք դիմում են սրբազանին. Այս տասը անձանց մէկին Ի. Դաւթեանին պ. երէցփոխը խոստացած է լինում հաշտութիւնը կայանալուց յետոյ 100 ր. վճարել յօգուտ ուսումնարանին երբև տուգանք. Ի. Դաւթեանցը սրբազանին՝ յայտնում է և սրբազանն էլ սրբանց Թախանձագին խնդրանացը գիջանելով կանչում է լինէ և հրամայում է հաշտութիւն. ես համաձայն սրբազանի կամաց ներողամիտ եմ լինում և հաշտութիւնը կայանում է. Հաշտութիւնը կայանալուց յետոյ սրբազանը ասում է լինէ. „գնա պատրաստ ը ինը և գործդ խաղաղութեամբ վերջացուր, որովհետև խնդիրը ունիս տուած դատաւորին“. Հաշտարար դատաւորը հարցնում է պ. Եարամիշեանից.—„մեղադիրը ես դուն“, նա պատասխանում է—„այո, “ուրեմն տուր 10 ր. տուգանքի. գործը այսպիսով վերջանում է. Անցնում է մի քանի օր պ. Ի. Դաւթեանցը պահանջում է պ. Եարամիշեանցից այն 100 ր., որ խոստացել էր յօգուտ ուսումնարանին տալ երբև տուգանք. Նա ուրանում է իւր խոստումը. Ի. Դաւթեանցը շատերի և հոգաբարձուաց վկայութեամբ հաստատում է իւր խոստումը և ստիպում է տալ, բայց նա դարձեալ յուրանում է և վիրաւորական խօսքեր է ասում պ. Ի. Դաւթեանցին. Ի. Դաւթեանցը գանգատվում է դատարանին և պատուաւոր անձանց վկայութեամբ ստանում է 100 ր. տուգանքը յօգուտ ուսումնարանի. Ահա Հիդ իրողութիւնը որ պատահել է և օրին վկայ են շատ շատերը. զարմանալի է Թէ ինչպէս պ. Եարամիշեանը Հմմաութիւնը մէկ կողմ Թողած, աշխատում է իւր գրուածքում իւր կեղտը հեռացնել իրանից և օտարների աչքում պարզերես երևալ, մինչ այս պատահած անցքը յայտնի չէ ամբողջ քաղաքին, վերջացնելով խօսքս՝ կամենում էի խօսել իւր վերայ գրած ինքնագովութեան մասին, բայց ասինս որ լրագրի սուղ էջերը չեն Թոյլ տալիս ինձ այդ անելու. Այդ մասին ես Թողնում եմ մի այլ ժամանակի. երբ հարկը պահանջէ, ես ցոյց կը տամ բազմակողմանի վիաստերով, Թէ արդեօք պ. Եարամիշեանը իւր հոգաբարձութեան և երէցփոխանութեան ժամանակ լինէ գործեր է կատարել և Թէ արդեօք նա վնասակար է եղել եկեղեցւոյ շահերին Թէ օգտակար, Թէ արդեօք իւր հարստութեամբ լինչքան չարիքներ է հասուցել այլոց.

Յակոբ քահանայ Այվազեանց.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կերմանական և աւստրիական կայսրների տեսակցութեան մասին հեռագրում են „Berl. Tageblatt“ Բեռլինից.—„Բերլին, 25 յուլիսի (6 օգոստոսի). Գերմանական և աւստրիական կայսրների միմեանց հանդիպումն տեղի ունեցաւ այստեղ, այժմ մօտ 11 ժամին. Կայսր Ֆրանց-Յովսէփը առանձին գնացքով ժամանեց այստեղ մի քանի րոպէ գրանից առաջ, ուղղակիցութեամբ երկու աղեւատանների և նոյն ժամուն գնաց կայսրանի շքեղ զարդարուած մուտքը. Նա պրուսական համազգեստով էր և Սև Արծուի ժապաւէնով. Մի քանի րոպէից յետ ժամանեց արքունական գնացքը, որի մէջ գալիս էր Զալցբուրգից Վիլհէլմ կայսրը իւր սվիտայով. Վիլհէլմ կայսրը աւստրիական համազգեստով՝ ընդունարան վազանի սրահակում կանգնած՝ ողջունեց իւր կայսերական բարեկամին. Հէնց որ գընացքը կանգնեցաւ՝ աւստրիացւոց կայսրը շտապաւ մօտեցաւ նրան, և երկու ենքնակալները ամենաանկեղծ և սրտանց ողջունեցին միմեանց. Նրանք մի քանի անգամ համբուրուեցան և գրկախառնուեցան. Դրանից յետոյ արքունական գնացքը Հանդարտորէն եաւ „Hôtel Elisabeth“-ի մօտ, որպէս զի մեծաւայլ հիւրերն Հաշէ տանեն. Կայսերական պալատը գնալու ժամանակ՝ Հանդարտորէն վերայ գրօսնող տիկիններից ծաղիկներ ընդէր էին Հազում կառքի մէջ. Պրուսացւոց մուտքի մօտ մեծ հիւրերն սպասում էին կայսրուհին և վալեսկա էրցհերցոգուհին. Ծաղկեայ Թանկագին փնջերով զարդարուած սեղանի չուրջը վիլհէլմ կայսրը պատուաւոր տեղ էր նստած. Աջ կողմում նստած էր կայսրուհին, իսկ ձախը՝ Ֆրանց—Յովսէփ կայսրը և էրցհերցոգուհի վալերիան. Ճաշին ներկայ էին, Ի միջի այլոց, կոմս Կալնոկին, մինիստր Թունայեվսկին, պրինց Բիսմարկը և կայսրների սվիտաները. Վիլհէլմ կայսրը Հաշի ժամանակ էլ ուսապրնական համազգեստով էր. Ճաշը վերջացաւ ժամի չորս ու կիսին. Վիլհէլմ կայսրը աւստրիացւոց կայսեր ուղեկցութեամբ վերադարձաւ հիւրանոցը.“

—

Փոնգօյա ժամանեց գեներալ Փորտոնի կողմից ուղարկուած մի դեսպան, որը Հաղորդում է, Թէ Քարտումը պաշարուած է 16,000 ապստամբներով. Փորտոնը նաւերով յաճախ դուրս է արշաւում և մասերումս կարողացաւ 5000 ցեհնները (100 լիսը) սպանդը բերելու. Նահանգապետի մատնութեամբ Բիբերը անձնատուր եաւ. Զօրապետակը Հեղկուեցաւ միայն երկար կռուելուց յետոյ.

—

„Köln. Zeit“. Բեռլինից մատնաւոր տեղեկութիւններին նայելով Լօնդոնում գերմանական դեսպան՝ կոմս Մինստերլին Հրամանագրուած է լորդ Գրէնվիլլից իմանալու Թէ՝ վերջապէս Երբ կը վճարուի Ալէքսանդրեան ռմբակոծելու համար վարձատրութիւնը. Ֆրանսիան էլ նոյնպէսի Հարց կը տայ, այնպէս որ այս կէտում գերմանական և Ֆրանսիական կառավարութիւնները միևնոյն դերքը կը բռնեն Անգլիայի վերաբերութեամբ.

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

7 Օգոստոսի.

Պետերբուրգ. Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչը արդկերանցով—Միխայիլ և Գէօրգի Միխայլովիչների Հետ երէկ Հանապարհ ընկաւ Կիեվի և Օռենսկի գինուորական շրջանները շրջագայելու Համար:

«Новости»-ի Հաստով ճախելը նորից Թոյլատրուած է:

Հռոմ. Վերջին երկու օրերում վարակուած տիզերում խոլերայով 27 Հոգի հիւանդացան, որոնցից 19 մեռան:

Պետերբուրգ. Մեծ գործատէրերին պատուաւորելուց առաջ՝ արևմտեան զօրախումբը առաջ խաղաց դեպի Եամուրգա, Հետևակը-երկաթուղիով, հեծելազօրը նոյնպէս. երկու գօրամիրերը պահպանողական շղթայ են կազմում:

Թաշկենտ. Կոկանդից և ուրից քաղաքներից եկած տիղմերի շնորհիւ՝ այստեղից փոստայով օրեկան 120 պուդ մեռաքս է ուղարկվում ամերիկեան ընկերութեան համար:

—220¾ ր., 2-րդ—215 ր. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը Թոյլ է:

Խմբագիր—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հինգշաբթի՝ ամսոյս 9-ին, Ս. Հռիփսիմեայ Ժողովարանում (իշ. Սամատունու տանը) Ր. Բուղդանեանցը՝ մասնակցութեամբ օր. Վարդուհու, օր. Ալբուհու, պ. պ. Սարգսեանցի, Հախնազարեանցի և ուրիշների, կը տայ մի ներկայացումն. I ԲՌՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ, II ԳԻՇԵՐՈՒԱՅ ՍՏԻՐԸ ԽԵՐ Է և III ՊՈՒՐ: Անտրակտներում կը նուագէ երաժշտական խումբը և կը լինի ազգանդար:

Մոսկուա գնացող Հանապարհորդակից եմ կամենում:

Հասցէն՝ գալլերէա Սրճարանի, № 98.

3—1

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Սրանով Հասցնում է մրգեղէն ծախողների և այգեպետերի ուշադրութեանը, որ նա միջոցներ է գործ դրել՝ քաղաք խոկ պտուղները բերելը արգելելու, ուստի մրգեղէն ծախողները Հրաւիրվում են չառնել այդ տեսակ պտուղները և չը ծախել, որովհետև, Հակառակ դէպքում՝ նրանք կ'ոչնչացնուին:

3—3

ՀԱՅԿԱԿԱՆ

„ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ“

Սեպտեմբերի վերջին լոյս կը տեսնի կենդրոնական գրավաճառանոցի Հրատարակութեամբ մեր «ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱՆԵՐ» անունով դասատետրը Հայոց գպրոցների Համար, ԵՐՐՈՐԴ ՏԵՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Հարստացրած և Հիմնական փոփոխութիւններն եենթարկած:

Մ. ՏԻՐ-ՄԱՐԳՈՍԵԱՆՑ.

10—8



ԱԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ·

«ԹԻՖԼԻՍ» ԱՅՍՐԱՆՈՒՄ ԳՆԱՅՔՆԵՐԻ ԳՆԱԼԸ ԵԻ ԳԱԼԸ

Փոստան գնում է Բաթում առաւօտեան	8	ժ. 31	րոպէ
„ գալիս է Բաթումից գիշերւայ	10	„ 25	„
Ուղևորների և ապրանքների գնացքը գնում է Բաղու առաւօտ.	10	„ 45	„
Բաղուից գալիս է կէսօրուայ	2	„ 30	„
Նաբաթը մի անգամ ուղևորների և ապրանքների գնացքի փոխարէն ենում ուղևորների արագ գնացքը.			
Բաղու գնում է երեքշաբթի երեկոյեան	10	„ 58	րոպէ
Բաղուից գալիս է ուրբաթ առաւօտեան	7	„ 53	„
Թ ի Ֆ լ ի ս ի և Ս ո ւ ր ա մ ի մէջ		„ 3.	
Թիֆլիսից ուղևորների և ապրանքների գնացքը գնում է ցերեկ		11	„
Սուրամից „ „ գալիս է առաւօտեան	8	„ „	„

Дозволено цензурою. Тифлисъ, 8-го Августа 1884 г.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12.

Типографія А. А. Михельсона Гл. upo., д. № 12.